

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կես տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէց).

Ճայտարարութիւնը ընդունւում է ամէն լիզուով.

Ճայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ԲՈՎԱՆԱԳՈՒԹԻՒՆ

Ինտելիգենտի զերը ինքնավարութեան
առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պրինց Նա-
պօլեօնի կողմ. Մամուլ. Խորհրդակցութիւն
Փոխարքայի մօտ. Տարրական դպրոցների ժո-
ղով. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Յրան-
սիրայից.—ՀԱՅԱՍՏԱՆԻՆԻ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զէմսովային
հիմարկութիւնների 1864 թ. կանոնադրու-
թիւնը:

ԻՆՏԵՒԳԵՆՏԻՍՅՈՒՆ ԴԵՐԸ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Շուտով պէտք է կայանան գաւառա-
կան և նահանգական խորհրդակցութիւն-
ներ, որոնց վերապահված է վերին առ-
աինքանի կարևոր դեր.—հաւաքել նիւթեր՝
Անդրկովկասում գէմսովային տնտեսու-
թեան բեֆօրմ մտցնելու հարցի համար և
մշակել այդ նիւթերը: Այդ խորհրդակ-
ցութիւններին մասնակցելու համար ա-
ռաջ պէտք է ընտրվեն տեղական ազգա-
բնակչութեան կողմից ներկայացուցիչներ,
որոնք կը կազմեն գաւառական ժամանա-
կաւոր խորհրդակցութիւններ և ապա կը
կազմվեն նահանգական ժամանակաւոր
խորհրդակցութիւններ, որին կը մասնակ-
ցեն գաւառական խորհրդակցութիւնների
մէջ ընտրված պատգամաւորներ:

Այդ խորհրդակցութիւնները.—թէ գա-
ւառական և թէ նահանգական—կարևոր
դերը կայանում է նրանում, որ նրանց
կատարած աշխատութիւնները, մշակած
նիւթերը պէտք է ծառայեն իբրև հիմք
այն վերջնական կանոնադրութեան հա-
մար, որ պէտք է կազմել Կովկասի Փոխ-
արքայի Խորհուրդը մեր երկրում գէմ-
սով մտցնելու համար: Այդ նիւթերի և
գաւառական ու նահանգական ժամանա-
կաւոր խորհրդակցութիւնների ժամանակ
արտայայտված կարծիքների ու ցանկու-

թիւնների համաձայն, պէտք է որոշվի և
այն զլխաւոր հարցը, թէ ինչ տիպի
գէմսով մտցնելու պէտք է մտցնել Կովկասում:
Ինչպէս յայտնի է, գէմսովայի երեք տիպ
կայ. առաջինը՝ 1864 թ-ի կանոնադրու-
թիւնն է, երկրորդը՝ 1890 թ-ի կանո-
նադրութիւնը, երրորդը՝ 1903 թ. կանո-
նադրութիւնը:

Ուրեմն, մեր երկրում գէմսով մտ-
ցնելու պէտք է, որի համար ամենից
շատ ցանկութիւն կարտայայտվի հողա-
տէրերի, քաղաքային և գիւղական հա-
սարակութիւնների ներկայացուցիչների
բերանով, գաւառական և նահանգական
խորհրդակցութիւնների ժամանակ: Ու-
րեմն, մեր երկրում կը մտցնվի այն տի-
պի գէմսով, որի կողմը կը լինի ազգա-
բնակչութեան մեծամասնութիւնը:

Բայց որպէս զի ազգաբնակչութիւնը,
մասնաւոր գիւղական դասակարգը կա-
րողանայ գիտակցաբար, անկախօրէն վե-
րաբերվել խնդրին, որպէս զի նա համոզ-
ված կարծիք և ցանկութիւն յայտնէ, թէ
մեր տիպի գէմսով մտցնելու պէտք է, որ-
պէս զի նա զգայ գործի ամբողջ լրջու-
թիւնը և կարևորութիւնը և ուղարկէ
համոզված, ձեռնհաս ներկայացուցիչներ՝
խորհրդակցութիւններին մասնակցելու,
անհրաժեշտ է, որ ազգաբնակչութիւնը
ծանօթանայ գէմսովայի էութեան և նրա
փունկիցներին, իրաւունքներին ու պար-
տաւորութիւններին հետ, որոնք սահման-
ված են վերոյիշեալ երեք՝ 1864, 1890 և
1903 թ. կանոնադրութիւնների մէջ, որ-
պէս զի նա կարողանայ. 1) կշռել և որո-
շել, թէ այդ կանոնադրութիւններից որ-
մէկը օգտակար, իր շահերին աւելի հա-
մապատասխան է, 2) լինել լրացումներ,
փոփոխութիւններ պէտք է մտցնել ըն-
տրված կանոնադրութեան մէջ, համաձայն
երկրի ցեղական, տնտեսական, կենցաղա-
կան առանձնայատկութիւններին և պայ-
մաններին:

Բաժ այն ամէն մի որոշումը, որ հակառակ է
օրէնքների կամ ընդհանուր պետական շահե-
րին: Այդպիսի կարգադրութեան կարգի և
ժամանակամիջոցի համար պահպանվում են
այն կանոնները, որոնք ցոյց են տուած ներ-
կայ կանոնադրութեան 94, 95 և 96 յօդ. մէջ:
Ներքին գործերի մինիստրը, իր կողմից, գէմ-
սովային ժողովի նիստերի երկու ժամանա-
կամիջոցներ ընթացքում կարող է կանգնեց-
նել օրէնքներին կամ պետական շահերին հա-
կառակ որոշումը, հաղորդելով այդ մասին
ժողովին նրա նիստերի համար նշանակված
տարեկան ժամանակում: Գործի յետագայ ըն-
թացքում մինիստրը և գէմսովային ժողովը
գիւղավարվում են 97-րդ յօդ. մէջ շարադրված
կանոններով:

10) Եթէ գէմսովային հիմարկութիւնները
կարգադրութիւններ չեն անի ի կատար ածե-
լու այն պարտաւորութիւնները (հարկերը),
որոնց կատարումը օրէնքը պարտադրել է հա-
մարում գէմսովային համար, այն ժամանակ
նահանգապետը, երբ իր յիշումները կը մնան
անհետանք, դիմում է, ներքին գործերի մի-
նիստի թոյլտուութեամբ, անմիջական կատա-
րողական կարգադրութիւնների, գէմսովային
հաշուով:

11) Զեմսովային հիմարկութիւններին
արվում է իրաւունք իրանց վերաբերեալ նա-
հանգապետի և վարչական բարձր իշխանու-
թիւնների արած կարգադրութեան դէմ բողոք
բառնալ կատարելի սննատին (առաջին դե-
պարտաւորութիւն): Այդպիսի գանգատներ տալու
ժամանակամիջոց որոշվում է այն ժամանակը,
որ նշանակված համար, կատարողական
կարգադրութեան յայտարարութիւնից յետոյ
(յօդ. 76 և 79), այն ժողովի որին վերաբերում
է գործը:

Արդ, այդ լուրջ և ծանր, բայց և համակ-
րելի գործը, միասին—ծանօթանալ ազ-
գաբնակչութեանը գէմսովայի էութեան և
նրա փունկիցներին և առհասարակ ինք-
նավարութեան մեծ գործի հետ—պէտք է
կատարել ինտելիգենտներ, տպագրական և
կենդանի խօսքի միջոցով, գաւառաւորու-
թիւններով, զրոյցներով, պրօպագանդա-
յով, բրոշուրներով:

Այդպիսի օգտակար պրօպագանդայի
սկիզբը դրեց գաւառում մեր լրագրի
խմբագիր պ. Այ. Գալանթարը, ինչպէս
հաղորդում է «Մշակի» մէջ տպված երէկ-
վայ հեռագիրը Ալեքսանդրօպօլից:

Մասնաւոր մեծ է և կը լինի կենդանի
խօսքի նշանակութիւնը և ազդեցութիւնը:
Ուրեմն մեր պահանջն է, որ մեր երկ-
րի լաւագոյն ոյժերը, ինտելիգենտ և գէմ-
սովային ինքնավարութեան գործին լա-
ծանօթ ոյժերը հրապարակ բերեն իրանց
աշխատութիւնը, իրանց ժամանակը, ի-
րանց գիտութիւնը՝ քարոզելու համար
ժողովրդին և տարածելու նրա մէջ ինք-
նավարութեան մեծ գաղափարը և ժողո-
վրդականացնելու այն հիմարկութիւնը,
որ հնարաւորութիւն պէտք է տայ ազ-
գաբնակչութեանը վարել, անկախօրէն, իր
տեղական գործերը, պաշտպանել իր
տնտեսական շահերը, կառավարել իր
գաղութները, իր ճանապարհները, բարւո-
քել իր առողջապահական, բժշկական,
նիւթական վիճակը:

«Մշակը» իր կողմից ևս ամէն կերպ
պէտք է աշխատէ ժողովրդականացնել
գէմսովային ինքնավարութեան գործը:
Այդ նպատակով էլ մենք ապում ենք
1864 թ-ի կանոնադրութիւնը, որ եղած-
ների մէջ ամենալաւն է և որը, մեր կար-
ծիքով, պէտք է ընդունվի վերջ ի վերջոյ
իբրև ցանկալի տիպ մեր երկրում մտց-
նելից գէմսովային հիմարկութիւնների
համար այն յաւելումներով և փոփոխու-
թիւններով, ի հարկէ, որոնք ծագում են

ժամանակակից առաջնութեան կեանքի պա-
հանջներից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ԳԵՆԵՐԱԼ ՆԱԶԱՆ-
ԳԱՊԵՏ ՊՐԻՆՑ ԼՈՒԻ ՆԱՊՈԼԵՕՆԻ ԿՈՂԸ ԵՐԵ-
ՎԱՆԵԱՆ ՆԱԶԱՆԳԻ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ

Ներկայ տարվայ յունիսի 16-ի Բարձրա-
գոյն ուկադով Երևանեան նահանգը յայտա-
բարել է զինւորական դրութեան մէջ:
Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի
փոխարքայի հրամանով, լիազօրութիւն ունեւ
իւ իշխանութեամբ ձեռնարկելու այն միջոց-
ներին, որոնք ցոյց են տրված այդ օրէնքների
19-րդ յօդ. (նկատող նախ. ընդ. կանոն. 23-րդ
յօդ.):

Կառավարութիւնը դիմեց այդ միջոցին՝ որ-
պէս զի Երևանեան նահանգում կարգ մտցնէ,
և վերականգնէ կեանքի, աշխատանքի սովոր-
ական պայմանները, որ անդադար խա-
փանվում են երկու ազգութիւնների ան-
սխալ թշնամութեամբ վերջին ամիսների ըն-
թացքում և, որպէս հետևանք այդ թշնամու-
թեան, ամէն մի առողջամիտ մարդու համար
խորապէս վրդովեցուցիչ բնութիւններով
սպանութիւններով, կողոպուտներով, հրդեհ-
ներով, որոնք հասցրին ազգաբնակչութեան մե-
ծամասնութիւնը տնտեսական լիակատար քայ-
քայման և աղքատութեան:

Սեւեանի նամակի հայ եւ քուրճ ժողովուրդ-
ն ոչ մի օրպէ չեն կտակածում, որ ձեր մէջ
չը գտնվի խելացի, տոկոս, հոգով ամուր
և ազգայնիկ մարդկանց մի յայտնի թիւ, որոնք,
տեղի ունեցող դէպքերից վրդոված, գիտակ-
ցելով ձեզ և ձեր ընտանիքներին մեծամեծ
աղէկանք սպանող զինքը, որ վերջին ժամա-
նակներս մտցրեց ձեր տներում խուճուրթիւն
և վիշտ, չը գտնէին իրանց մէջ բաւական
հոգեւոր ոյժ, որպէս զի իրանց ազդեցութեամբ
խանդաված կարգը վերականգնեն և դրանով
ինձ միջոց աման առանց զոհերի, ի կատար

կալները և հոգաբարձուները ունեն գոյքային
այն պայմանները, որոնք սահմանված են 23
և 28 յօդուածներով ընտրողական ժողովներին
մասնակցելու համար և եթէ չը կան 17-րդ
յօդուածի մէջ ցոյց տուած արգելքները՝ նը-
բանց այդ ժողովներին թոյլ տալու համար:
Իսկ զբանից ի գալան սեռի անձինք կարող
են լիազօրութիւն տալ ընտրութիւններին
մասնակցելու իրանց հայրերին, ավուներին-
բնին, որդիներին, փեսաներին և հարազատ
եղբայրներին նոյն իսկ այն դէպքերում, երբ
լիազօրութիւն ստացողները չեն համապա-
տասխանում վերոյիշեալ գոյքային, պայման-
ներին, եթէ միայն ընտրողական ժողովներին
նրանց թոյլ տալու համար չը լինեն արգելք-
ներ 17-րդ յօդուածի համաձայն:

Մանօրութիւն. 1. Այն յօդուածում յիշված
հաւատարմագիրները գէմսովային ընտրու-
թիւններին մասնակցելու համար պէտք է
գրված լինեն հաւատարմագրի համար սահ-
մանված գրքերի թղթի վրա և ստորագրված
հաւատարմագիր տուողի և երկու վկաների
կողմից. ստորագրութիւնն էլ պէտք է վաւե-
րացրված լինի ոստիկանութիւնից, կամ
մերձաւոր իշխանութիւնից, կամ հաշտարար
միջնորդից, կամ հաշտարար գաւառաւորից:
Այն անձանց, որոնք կը գտն ժողովին հա-
սարակ թղթի վրա գրված հաւատարմագրե-
րով, կը թոյլատրվի մասնակցելու ժողո-
վին միայն այն ժամանակ, երբ կը վճարեն
գէրք թղթի համար տուրքը:

19) Աստուածահաճոյ, բարեգործական,
կրթական, արդիւնաբերական և այլ հաստա-
տութիւնները, հասարակութիւնները, ընկե-
րութիւնները, որոնք ունեն գէմսովային ըն-
տրութիւններին մասնակցելու իրաւունք
տուող անշարժ գոյք, նշանակում են իրանց
կողմից ընտրողական ժողովներին մասնակցե-
լու համար հաւատարմագրանք, պահպանու-
թեամբ այն պայմաններին, որոնք սահմանված
են նախորդ յօդուածում:

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԵՄՍՈՎԱՅԻՆ ՀԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ 1864 թ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն, տես «Մշակ» № 140)

6) Զեմսովային հաստատութիւնները գոր-
ծում են անխախտ, իրանց յանձնված գործերի
շրջանում: Օրէնքը որոշում է այն դէպքերը և
կարգը, երբ նրանց գործողութիւնները և
կարգադրութիւնները պէտք է ենթարկվեն կա-
ռավարչական ընդհանուր իշխանութիւնների
հաստատութեան և դիտողութեան:

7) Զեմսովային հիմարկութիւնները իրանց
որոշումները և անօրէնութիւնները մէջ, չեն
կարող դուրս գալ իրանց ցոյց տուած գործե-
րի շրջանից, ուստի նրանք չեն խառնվում
այն գործերի մէջ, որոնք պատկանում են կա-
ռավարչական, դասակարգային և հասարակա-
կան իշխանութիւններին ու հիմարկութիւննե-
րի գործողութեան շրջանին: Սրա հակառակ
արված նրանց ամէն մի որոշումը համարվում
է անօրէն:

8) Զեմսովային հիմարկութիւնները են-
թարկվում են օրինական պատասխանատու-
թեան ներքեւում ցոյց տուած կարգով, իրանց
իշխանութեան սահմանից դուրս գալու, գոյու-
թիւն ունեցող օրէնքների հակառակ գործելու,
տեղական իշխանութիւնների օրէնքի վրա
հիմնված պահանջները չը կատարելու, իրանց
յանձնված տնտեսական գործերի մասին ան-
կանոն անօրէնութիւններ անելու և հասարա-
կութիւններին կամ մասնաւոր անձանց հասց-
րած ամէն մի վնասի կամ ճնշման համար:

9) Նահանգապետը իրաւունք ունի կանգ-
նեցնել գէմսովային հիմարկութիւնների ա-

[illegible]

